ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Ո՛չ, ատելի չես, դու կեանք վշտալից,
Երբ քո խառվայոյզ, բազմահոգ գրկում
Տանջելով մարդուն—նաև կարեկից,
Անկեղծ ընկեր ես նորան պարգևում։
Ծանր չէ՞ քո խաչն, երբ մենք կորացած
Այդ խաչի տակին խուլ հառաչելիս,
Ունենք մտերիմ, որ մեզ համազգաց՝
Մեզ հետ խնդում է և մեզ հետ լալիս...
Երբ գիտենք, որ կայ գոյութեան կուռում
Մեզ սիրող մի սիրտ—անձնուրաց ընկեր,
Որ միշտ պատրաստ է տանջանքի ժամում
Իւր սիրով սրբել մեր արտասուքներ։
Եւ որպէս անյանգ, որպէս համարձակ
Ցառանչ, միշտ յաւանչ ձգտում է հոգին,
Երբ կեանքում, որպէս յուսատու հրեշտակ,
Ընկերն ընկերոջ սեղմում է կրծքին։
Այնտեղ մտերմի սիրառատ գրկում
Ե՛ւ փուշն է ծաղիկ, և՝ լացը ծիծաղ.
Այնտեղ և՛ ձմեռն է գարնան պէս ժպտում,
Այնտեղ և՛ մահուան համբոյրն է խաղաղ։
Ո՛չ, ատելի չես, օ, կեանք վշտալից,
Երբ քո խառվայոյզ, անվերջ փոթորկում
Տանջելով մարդուն—դու և՛ կարեկից,
Անկեղծ ընկեր ես նորան պարգևում։

8 սեպտեմբերի, 1892 թ., Մոսկուա։